

մար էր, որքին համար էր : Իր բարի հոգին , միշտ ժպիտով օծուն , աշտանակի վրայ դրուած նրագ էր . որքան լոյս կու տար իր շուրջն՝ այնքան կ'արծարծէր , կուսաորչի կանքեղին պէս : Իր յորդորներն երկու նամբայ ունէին . հայրե-
նիքի եւ կրօնի ուղին : Աւա՛ղ , ինչո՞ւ բախտ չունեցար երթալու եւ վերածնող
հայրենիքը տեսնելու , համբուրելու հնաբոյր սուրբ եկեղեցիները եւ քայլ առ
քայլ հետեւելու այն սրբադրոշմ՝ հետեւերուն , որ Մ'իսիբար քողուց էջմիածի-
նէն Սեւան , Սեւանէն Ս . Նշան :

Բայց Ս . Ղազարն եղած է միշտ մանրանկար Հայաստան մը . պատմա-
կան հրաշք մը , որ դարերով հայրենի շունչ ու կեանք տուած է պանդուխտ
վանականներուն : Այդ ակուքին շուրջ , որուն Մ'իսիբարն է դարերով կրակը ,
Ս . Ղազարի Հայրերը բոլոր լացեր եւ երագեր են հայրենիքը :

Ուրիշ ի՞նչ նամբայ բռնէր Արք . Աբբահայրը . այդ էր մեծ Հիմնադրին
բացած ուղին . գոհուիլ կրօնի եւ հայրենիքի համար գիտութեան յարոյկին
վրայ , առաջնորդել Միաբանութիւնը պատերազմներու փոքորիկներու մէջէն .
ցոյց տալ երկինքի մէջ Սեւանի միշտ լուսաւոր ԵՂԻՑԻՆ :

Ո՛չ շրթներուն վրայ որոտընդոստ քառեր կային , ոչ ալ աչքերուն մէջ
հպարտ նայուածք : Յատկութիւն մ'ունէր որ իրեն սեփական էր . կարծես քէ
իր վրայ ձեռուած ու կարուած ըլլար Աստուծոյ մատներով բարութեան շը-
նորհքը , որ անսպառ ու լիաբուն կը պիտէր ամէն քայլափոխին եւ երբեք
չէր ալեկոծուեր ցուրտ քամիներէ :

Մարդ էր ամէնուն նման , կը նանչնար մարդկային տկարութիւնները
եւ գիտէր զանոնք փոխադրել աստուածային նամբաներուն վրայ , բարի Սա-
մարացիին նման վերքեր պատել ժպիտի սպիտակ պաստառով՝ բուժելու հա-
մար :

Ո՞վ իր բովէն բաժնուեցար , առանց բուրումնաւէտ յիշատակ մը տա-
նելու , մանաւանդ բարի ժպիտը , որ լոյսի պէս կը մնար հանդիպողին աչքե-
րուն մէջ :

Մարդիկ կան , որոնք երէ տասն անգամ մեռնին , հազար անգամ յա-
րութիւն կ'առնեն բարի յիշատակի քեւերով : Իր սիրելիներուն հետ կարծես
կը քալէ , կը խօսի , կը ժպտի մանուկի պէս այն եզակի ժպիտով , որ երբեք
չի մեռնիր :

Հ . Վ . Յ .

ԶԱՅՆ ԵՐԿՆՑԵՆ

ԳՐՊԾ . ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔ . ՈՒՂՈՒՀՈՃԵԱՆԵ

Եզրը նամբուն սաղարթախիտ իմ գիւղիս ,
Մատուռ մը կար՝ ուր ըսին քէ օր մը գիս ,
Մկրտած են հայոց ծէսով փառաւոր ,
Որ ապրիմ ես խաչը կուրծքիս միշտ հըզօր
Ու բարութեամբ քալեմ նամբաս սահմանուած ,
Մինչեւ հասնիմ հոգիս տալու առ Աստուած :

Ու կը յիշեմ՝ երբ դեռ հագիւ պատանի ,
Իմ հայկական արիւնիս մէջ ըզգացի ,
Լոյսը փրկիչ՝ գոր հաւատքի խորանէն
Հաղորդեց ինձ քահանայ մը խաչագէն .
Ես այդ պահուն ճայնը խղճիս լըսեցի . . .
Սիրտըս նըւէր քող ըլլայ քեզ՝ Տէ՛ր՝ ըսի :

Խօսքը խղճիս խանդավառեց իմ հոգիս ,
Եւ վարգեցի դէպի հոն ուր տարաւ գիս
Կամքը անյաղք երկնահանոյ կոչումիս .
Ու ալ ընդմիշտ Մ'իսիբարայ յարկին տակ ,
Եկեղեցոյս ու ազգիս յոյժ հըպատակ
Աղօթեցի՝ աշխատեցա՛յ՝ անսայթափ :

Օր մը գարնան՝ մեծ եղեռնի սուգ տարւոյն ,
Արժանացայ ձեռնադրուիլ քահանայ ,
Գիւղըս Դատեմ՝ հրկիզուած էր այդ պահուն ,
Ազգըս ամբողջ երբ հասած էր Գողգոթա
Ես մատուցի պատարագն իմ առաջին ,
Լո՛յս ժտելով եւ փրկութիւնն իմ ցեղին :

Կէս դար յետոյ՝ ես վարդապետ պարտասուն ,
Ըզգացի որ ժամն է հասած մեկնումի . . .
Վերջին անգամ՝ Զատիկը սուրբ տօնեցի ,
Ու երկիւղած աղերսեցի օրհնութիւն ,
Տէ՛ր իմ , ըսի , տարեդարձին իմ օծման՝
Տո՛ւր իմ հոգւոյս երկնքի մէջ ապաստան . . . :

Լոս Անճեղըս , Մայիս 1965

Մ . ՄԵՍՏԵԼԻ